ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 23-ը հունվարի 2018թ.

ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ոսկանյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

*(Ա. Գրիգորյան)*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Հանդերձանքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ |
| 2 | <Պահապան> ՍՊԸ |
| 3 | <Բլաժ> ՍՊԸ |
| 4 | <Մետաքսկոմբինատ> ՍՊԸ |
| 5 | <ԳԴԱԿ> ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:.*

**2 .«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին,**

**տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Գրիգորյան)

2.1 Թվով 5 մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Թվով 5 մասնակիցների էլեկտրոնային հայտերում իրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 <Պահապան> ՍՊԸ-ի, <Բլած> ՍՊԸ-ի և <ԳԴԱԿ> ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցով ընթացակարգի իրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

<Մետաքսկոմբինատ> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի ապահովումամ /Հավելված 10/ մասնակցի բանկի հաշվեհամարում թվերի մեջ առկա է ավել նիշ /գծիկ/, որի հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է նրա հայտը:

<ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ -ի հայտում առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝ <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 2.1-ում նշված չէ շահառուի հայրանունը: Անհրաժեշտ է նշել շահառուի հայրանունը:

Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակցին 30.01.2018թ. ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Գրիգորյան)

3.1 Գնային առաջարկ են ներկայացրել 5 մասնակից.

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվային գումարը | 1-ին տեղ զբաղեցրած կազմակերպության | | | Մրցույթի մասնակցող կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումը | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ընդհանուր | | առանց ԱԱՀ | ընդհանուր |
| 1 | Արտադրական հատուկ հագուստ /կոստյում /բաճկոն և անդրավարտիք/՝ հոսպիտալային, բամբակյա/ | լ-կ | 2 775 | 11 804 850 | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 9 684 750 | 11 621 700 | <Պահապան> ՍՊԸ | 9 823 500 | 11 788 200 |
| | | | | | | | | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 9 684 750 | 11 621 700 |
| 2 | Արտադրական հատուկ հագուստ /կոստյում /բաճկոն և անդրավարտիք/՝ հոսպիտալային, տաք/ | լ-կ | 2 775 | 14 269 050 | <ԷԼԱԱՄՈԴ | 11 516 250 | 13 819 500 | <Պահապան> ՍՊԸ | 11 571 750 | 13 886 100 |
| | | | | | | | | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 11 516 250 | 13 819 500 |
| 3 | Արտադրական հատուկ հագուստ /խոհարարի բամբակյա բաճկոն/ | հատ | 2 100 | 6 300 000 | Հավասար գին, միաժամանակյա բանակցություն | | | <Պահապան> ՍՊԸ | 5 040 000 | 6 048 000 |
| | | | | | | | | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 5 040 000 | 6 048 000 |
| 4 | Խալաթներ /բամբակյա խալաթ խոհարարական/ | հատ | 2 100 | 6 930 000 | <Պահապան> ՍՊԸ | 5 166 000 | 6 199 200 | <Պահապան> ՍՊԸ | 5 166 000 | 6 199 200 |
| | | | | | | | | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 5 544 000 | 6 652 800 |
| 5 | Գլխարկանշան /գլխարկանշան դաշտային համազգեստի/ | հատ | 98 270 | 9 827 000 | <Բլած> ՍՊԸ | 7 779 708.33 | 9 335 650 | <Բլած> ՍՊԸ | 7 779 708.33 | 9 335 650 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Տարբերանշաններ /կրծքանշան Հայկական բանակ/ | հատ | 110 000 | 7 700 000 | <Պահապան> ՍՊԸ | 2 640 000 | 3 168 000 | <Պահապան> ՍՊԸ | 2 640 000 | 3 168 000 |
| | | | | | | | | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 2 750 000 | 3 300 000 |
| | | | | | | | | <Մետաքսկոմ բիզնես> ՍՊԸ | 4 125 000 | 4 950 000 |
| | | | | | | | | <ԳԴԱԿ> ՍՊԸ | 5 225 000 | 6 270 000 |
| 7 | Տարբերանշաններ /Կրծքանշան արյան կարգի/ | հատ | 110 000 | 8 250 000 | <Պահապան> ՍՊԸ | 2 420 000 | 2 904 000 | <Պահապան> ՍՊԸ | 2 420 000 | 2 904 000 |
| | | | | | | | | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 3 575 000 | 4 290 000 |
| | | | | | | | | <Մետաքսկոմ բիզնես> ՍՊԸ | 4 583 333.34 | 5 500 000 |
| 8 | Թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան պաշտպանական գույնի/ | հատ | 110 000 | 11 000 000 | <Պահապան> ՍՊԸ | 3 850 000 | 4 620 000 | <Պահապան> ՍՊԸ | 3 850 000 | 4 620 000 |
| | | | | | | | | <Մետաքսկոմ բիզնես> ՍՊԸ | 6 416 666.67 | 7 700 000 |
| | | | | | | | | <ԳԴԱԿ> ՍՊԸ | 7 975 000 | 9 570 000 |
| 9 | Թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան զորատեսակի/ | հատ | 110 000 | 7 700 000 | <Պահապան> ՍՊԸ | 2 695 000 | 3 234 000 | <Պահապան> ՍՊԸ | 2 695 000 | 3 234 000 |
| | | | | | | | | <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ | 5 500 000 | 6 600 000 |
| | | | | | | | | <Մետաքսկոմ բիզնես> ՍՊԸ | 5 500 000 | 6 600 000 |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի 3-րդ (Արտադրական հատուկ հագուստ /խոհարարի բամբակյա բաճկոն/) չափաբաժնի մասով <Պահապան> ՍՊԸ-ի և <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ-ի առաջարկած գները հավասար են, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 06.02.2018թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓԶ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հետ վարվել են միաժամանակյա բանակցություններ: Բանակցությունների ավարտին <Պահապան> ՍՊԸ-ն առաջարկել է 6 035 400 ՀՀ դրամ, իսկ <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ-ն չի նվազեցրել գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

*(Ա. Գրիգորյան)*

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ **07.02.2018թ.** «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել <ԷԼԱԱՄՈԴԱ> ՍՊԸ-ն, <Պահապան> ՍՊԸ-ն և <Բլաժ> ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Ա. Գրիգորյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Գնահատող** Վ. Գասպարյան

**Գնահատող** Վ. Պապյան

**Գնահատող** Գ. Ոսկանյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնահատող** Ս. Նիկոյան

**Գնումները համակարգող՝** Ա. Գրիգորյան

**07.02.2018թ.**